# ՀՈՐԻԶՈՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

horizon | HÉBDOMADAIRE ARMÉNIEN – Supplément en français | ARMENIAN WEEKLY – English supplement

VOL. 42 / No.8-9 (2142-2143), 8+4+4+16 էջ / $1.75

ՅՈՒԼԻՍ 20-27 / 20-27 JUILLET /20-27 JULY 2020







# Գանատահայութեան լիաբուռն մասնակցութեամբ 206 հազար տոլար գոյացաւ Լիբանանահայութեան ի նպաստ կազմակերպուած Ռուիրահաւաք-թելեթոնին

*Կրկի՛ն մթագնած է Միջին Արեւելքի սիրտը կազմող Լիբանանի երկինքը. բազմաչարչար այս երկիրը տեսած է պատերազմ, տեսած է հակամարտութիւններ, ապրած է կենցաղային ճգնաժամեր, տնտեսական տագնապներ, ապա վերջերս՝ Թագաժահրի տագնապը եկաւ իր աւերիչ դրոշմը դնելու երկրին տնտեսական ու կենցաղային իրավիճակին վրայ: Հետզհետէ վատթարացող կացութիւնը իր գագաթնակէտին հասաւ տնտեսական ճգնաժամով, որուն հետեւանքով վտանգուեցաւ նաեւ հայ գաղութը ու «դանակը ոսկորին հասաւ»:*

*Գանատահայութիւնը միշտ լիաբուռն օժանդակութիւն հասցուցած է հոն՝ ուրկէ եկած է տագնապի ձայնը, հայրենիքէն եկած ըլլայ ան թէ Սփիւռքի որեւէ գաղութէ:*

*Լիբանանահայութեան տագնապին նկատմամբ ձեռնածալ չմնաց գանատա-*

*ԹԵԼԵԹՈՆ... Շար. էջ 3*



## Դաշնակցութիւնը կանգնած է Հայոց յաղթական բանակի կողքին.
## *ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմին*

*Հերթական անգամ Ադրբեջանը դիմում է ագրեսիայի: Իր երկրի ներքաղաքական անյաջողութիւններից ուշադրութիւնը շեղելու նպատակով այս անգամ թիրախաւորուել է Հայաստանի Հանրապետութեան սահմանի հիւսիսարեւելեան հատուածը, այդ թւում հրետակոծուել են նա- խաղաղ բնակավայրեր: Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան ինքնիշխանութեան ու տարածքների նկատմամբ Ադրբեջանի ռազմական ոտնձգութիւնների փորձերը ինչպէս նախկինում, այնպէս էլ հիմա դատապարտուած են ձախողման հայոց փառապանծ բանակի արհեստավարժ եւ հայրենանուէր հակազդման շնորհիւ:*

*Թուրքիայի Հանրապետութիւնն անթաքոյց յայտնում է իր սատարումն Ադրբեջանի զաւթողական գործողութիւններին՝ հերթական անգամ ապացուցելով ազգային թշնամանք ու ատելութիւն քարոզող վարչակազմերի էութիւնը: Դէպի Հայն ու Հայաստանը ուղղուած նրանց կոյր ատելութեան դէմ հանդիման կանգնած է հայ ժողովուրդը՝ իր հայրենիքի համար մղուող սրբազան պայքարով: Պատմութեան ընթացքում բազմիցս է ապացուցուել հայրենիքի պաշտպանութեան հարցում հայոց միասնականութիւնը:*

*Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, ինչպէս միշտ, իր աշխարհասփիւռ կառոյցով վճռականօրէն կանգնած է Հայոց յաղթական բանակի, նրա զինուորի ու սպայի կողքին՝ հայրենիքի պաշտպանութեան առաջնային դիրքերում:*

*Միաժամանակ փաստում ենք՝ միջազգային հանրութիւնն ու քաղաքակիրթ մարդկութիւնը չպէտք է անտարբեր մնան Թուրք-ադրբեջանական տանդեմի ռազմատենչ վարքագծի նկատմամբ, հակառակ դէպքում՝ այն կործանարար կը լինի ինչպէս փխրուն զինադադարի, այնպէս էլ տարածաշրջանի համար:*

*Ուստի, դիմելով միջազգային հանրութեանը, կոչ ենք անում ոչ թէ կողմերին հերթական՝ համարժէք զսպուածութեան յորդորներն անել, այլ յստակ գնահատել Թուրք-ադրբեջանական ագրեսիան եւ համարժէք միջոցներ ձեռնարկել արհաւիրքից խուսափելու համար:*

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայաստանի Գերագոյն մարմին

## Հայկական Զինուած Ուժերը Կանխած Են Ատրպէյճանցի Զինուորներու Կողմէ Պետական Սահմանը Խախտելու Փորձը

Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւն. «Խստօրէն Կը Դատապարտենք Տարածաշրջանի Անկայունութիւն Հրահրելու Թուրքիոյ Փորձերը»



Մանրամասնութիւնները կարդալ էջ 3






Al★Nejmah
MIDDLE EASTERN SUPERMARKET
NOW OPEN
Սեփականատէր
Յարութ Սիփան
Ընտանեկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ
IN HOUSE
COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON
Սուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիրի հաց եւ իրաքեան սոմուն
Supermarket | Restaurantl I Bakery I Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ
PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga

# Վերահաստատելով Սփիւռքի գաղութներու փոխադարձ զօրակցութեան աւանդը

Հ. Յ. Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր գաղափարաբանութեան, իր բոլոր ուժերով կը նուիրուի բովանդակ հայ ազգի քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային շահերու պաշտպանութեան
ԾՐԱԳԻՐ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

*Յուլիս 9-ին, իր բարոյական պատասխանատուութեան կանչին ականջալուր, Գանատահայութիւնը աներկբայօրէն մասնակից դարձաւ Լիբանանի հայութեան զօրակցելու նուիրահաւաքին:*

*Գանատայի համայնքի կազմաւորումէն ի վեր, Դաշնակցութեան գործունէութեան ժամանակագրութիւնը հատած է մէկ դարու սահմանագիծը: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կառոյցի գործօն դերակատարութիւնը Գանատայի համայնքային կեանքին մէջ իմաստաւորուած է թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ հայրենի բնօրրանի տարաբնոյթ զօրակցական դրուագներով:*

*ՀՅԴ Գանատայի կառոյցը պատասխանատուութիւն ստանձնած է հո՛ն, ուր ազգային յանձնառութիւն եղած է եւ բազմաբնոյթ այդ յանձնառութիւններու բնորոշիչ արժանիքը հանդիսացած է ՀՅԴ Գանատայի կառոյցի եւ ուղեկից միութիւններու ու կազմակերպութիւններու համախումբ ու կազմակերպ աշխատանքը: Իրողապէս, գանատահայութեան կազմակերպութիւններու ներուժի համադրուած ու լիարժէք օգտագործմամբ հնարաւորութիւն ընձեռուած է ամրագրելու համայնքի կենսունակութիւնն ու գոյատեւելիութիւնը:*

*Անցնող օրերուն, Լիբանանահայութեան տագնապի, առկայ մարտահրաւէրներուն եւ անոր ապագային սպառնացող վտանգին ի տես՝ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէն, Մայիս 20ին յառաջացուց Լիբանանահայութեան Օժանդակութեան Գանատայի Մարմինը:*

*Վերոնշեալ մարմնի կազմակերպած Յուլիս 9ի նուիրահաւաք-թելեթոնի համաժողովրդային մասնակցութիւնը եկաւ հաստատելու, որ համայնքի զաւակները զերծ են նախապաշարումներէ եւ հաւատք կ՛ընծայեն ու կը վստահին Դաշնակցութեան համագաղութային նուիրահաւաքի նախաձեռնութեանց: Այդպէս եղած է նաեւ անցեալին, երբ նուիրահաւաքներ կատարուած են ի զօրակցութիւն Արցախեան Ազատամարտին, Հայաստանի սահմանամերձ բնակավայրերուն (վերջին արշաւը՝ այս տարուան Ապրիլին, ՀՅԴ ԳԵՄ-ի կողմէ), Ջաւախքին, սուրիահայութեան:*

*Գանատայի կուռ համայնքը, որուն ազգային, եկեղեցական եւ կրթական կառոյցները կը գտնուին համաշխարհային համավարակի առթած ճգնաժամին մէջ, որուն դպրոցները, եկեղեցիներն ու համայնքային կեդրոնները այսօրուան դրութեամբ կը գտնուին տնտեսապէս անձուկ դրութեան մէջ, անձնուրաց մղումով ձեռք երկարեց աւելի կարեվէր գաղութին:*

*Ահա այս է Դաշնակցութեան առաքելութեան հիմնառանցքը, կազմակերպական իր ներուժի ամբողջական կիրառումով զօրավիգ կանգնիլ Հայրենիքին ու հայրենակիցին: Կուսակցութեան գաղափարախօսութեան ակունքներուն խորքը ուրուագծուած ու դաջուած է հայ ժողովուրդի մէկութեան եւ ապահովութեան գերագոյն նպատակը: Ա՛յս ձեւով է որ կազմաւորուած է ՀՅԴաշնակցութեան հայրենատիրութեան ու աշխարհացրիւ ազգի միասնութեան սրբազան հանգանակը:*

*ՀՅԴ Գանատայի կառոյցը, այդ հանգանակին հաւատարիմ՝ պատնէշի վրայ է, անձնուէր, միակամ, զգաստ ու անվկանդ:*

**Վահագն Գարագաշեան**

# Հայկական Զինուած Ուժերը Կանխած Են Ատրպէյճանցի Զինուորներու Կողմէ Պետական Սահմանը Խախտելու Փորձը

*Ատրպէյճանի զինուած ուժերու զինուորները 12 յուլիսին՝ մօտ ժամը 12:30-ին, ՈՒԱԶ մակնիշի մեքենայով Տաւուշի ուղղութեամբ Հայաստանի պետական սահմանը խախտելու փորձ կատարած են:*

*«Արմէնփրես»-ի հաղորդումով՝ այս մասին Դիմատետրի իր էջին վրայ գրած է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մամլոյ բանբեր Շուշան Ստեփանեան: «Հայկական կողմի նախազգուշացումէն ետք Ատրպէյճանի զինուորները, ձգելով ՈՒԱԶ մակնիշի մեքենան, վերադարձած են իրենց դիրքը: Ժամը 13:45-ին Ատրպէյճանի զինուած ուժերու զինուորները կրկնած են հայկական զինուած ուժերու սահմանային դիրքը գրաւելու փորձը՝ կիրարկելով հրետանային կրակ, սակայն ճնշուած են հայկական կողմէն եւ, կորուստներ կրելով՝ ետ շպրտուած», յայտնած է Ստեփանեան՝ աւելցնելով, որ հայկական կողմէն կորուստներ չկան:*

*Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը կը յայտնէ, որ հայ-Ատրպէյճանական սահմանին 12 յուլիսին տեղի ունեցած դէպքին պատճառով սպաննուած է Ատրպէյճանցի 2 զինուոր, իսկ 5 ուրիշներ վիրաւորուած են:*

*Աւելի ուշ, կիրակի, 12 յուլիսի երեկոյեան Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մամլոյ բանբերը տեղեկացուց, թէ Ատրպէյճան վերսկսած է ռմբակոծել Տաւուշի հայկական զինուորական նոյն դիրքերը:*

## Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւն. «Խստօրէն Կը Դատապարտենք Տարածաշրջանի Անկայունութիւն Հրահրելու Թուրքիոյ Փորձերը»

*Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւնը արձագանգեց Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան, որով այդ երկիրը անվերապահ աջակցութիւն յայտնեց Ազրպէյճանին՝ փաստացիօրէն արդարացնելով անոր կողմէ հայ-ազրպէյճանական սահմանին վրայ ուժի կիրարկումը:*

*Յայտարարութեան մէջ նշուեցաւ.*

*«12 յուլիսին Թուրքիայի արտաքին գործոց նախարարութիւնը հանդէս է եկել յայտարարութեամբ, որով ոչ միայն իր երկրի անվերապահ աջակցութիւնն է յայտնում Ազրպէյճանին՝ փաստացիօրէն արդարացնելով Ազրպէյճանի կողմից հայ-ազրպէյճանական սահմանին ուժի կիրառումը, այլեւ տարածում է բացայայտ սուտ եւ ապակողմնորոշիչ տեղեկատուութիւն:*

*Թուրքիայի այս սադրիչ կեցուածքը եւ Հայաստանի դէմ ուղղուած անհիմն մեղադրանքները հաստատում են այն իրողութիւնը, որ այդ երկիրը գործում է ոչ թէ որպէս ԵԱՀԿ Մինսքի խմբի անդամ, այլ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան մէջ ներգրաւուած կողմ: Այս իրողութիւնն առաւել քան անհնար է դարձնում միջազգային՝ նախ եւ առաջ ԵԱՀԿ շրջանակներում Թուրքիայի որեւէ դերակատարում, որն առնչւում է ղարաբաղեան հակամարտութեանը:*

*Թուրքիայի ձգտումը՝ միջամտելու իր դրացի տարածաշրջաններում առկայ հակամարտութիւններին, արդէն իսկ յանգեցրել են այդ տարածաշրջաններում անվտանգութեան խաթարմանը եւ անկայունութեան տարածմանը:*

*Խստօրէն դատապարտում ենք մեր տարածաշրջանում անկայունութիւն հրահրելու Թուրքիայի փորձերը եւ հաստատում, որ Հայաստանն շարունակելու է հետեւողականօրէն հանդէս գալ միջազգային եւ տարածաշրջանային անվտանգութեան պահպանման եւ ամրապնդման դիրքերից՝ այդ ուղղութեամբ սերտօրէն համագործակցելով իր միջազգային գործընկերների հետ»:*

ԹԵԼԵԹՈՆ... Սկիզբը էջ 1

*հայ գաղութը, որ հայ ազգը հարուածող պատուհասներուն ընդառաջ միշտ առաջնեկը եղած է, որ օգնութեան ձեռք կ՚երկարէ օժանդակելու համար մեր հայրենակիցներուն ամէնուրեք՝ Հայաստանի, Արցախի կամ Սփիւռքի մեր օճախներուն մէջ: Հետեւաբար անվարան յառաջացուց Լիբանանահայութեան Օժանդակութեան Մարմին մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին գաղութիս կազմակերպութիւններն ու միութիւնները, եւ կոչ ուղղուեցաւ համայն գանատահայութեան, որպէսզի անտարբեր չմնայ լիբանանահայութեան օգնութեան կանչին հանդէպ:*

*Ապա ծայր առին դրամահաւաքի աշխատանքները, եւ գանատահայութիւնը, իր աւանդութեան համաձայն, անսաց Օժանդակութեան Մարմնի կոչին ու իր պատրաստակամութիւնը յայտնեց՝ անվերապահ մասնակցութեամբ լիբանանահյութեան ի նպաստ կազմակերպուած թելեթոն-նուիրահաւաքին, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 9 Յուլիս 2020-ին:*

*Նշեալ դրամահաւաքին սրտի խօսքերով ու ելոյթներով հանդէս եկան հայրենի եւ սփիւռքահայ արուեստագէտներ, կազմակերպութիւններու եւ միութիւններու կողմէ ներկայացուցիչներ, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն, ՀՅԴ երիտասարդական, պատանեկան եւ ուսանողական միութիւններու անդամներ, ՀՄԸՄականներ, Համազգայինի անդամներ, ՀՕՄի անդամներ, Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի եւ Թորոնթոյի ՀՕՄի ամենօրեայ վարժարանի աշակերտներ եւ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեան, որոնք բոլորը իրենց զօրակցութիւնն ու անվերապահ աջակցութիւնը յայտնեցին լիբանանահայութեան եւ կոչ ուղղեցին գանատահայութեան՝ իրենց լուման բերելու տագնապալի վիճակի մէջ յայտնուած մեր ժողովուրդին ի նպաստ: Հայրենի եւ Սփիւռքահայ արուեստագէտներու մասնակցութիւնը երանգ տուաւ նուիրահաւաքի յայտագրին:*

*Կոչերը ապարդիւն չեղան, ի զուր չանցան Լիբանանահայութեան Օժանդակութեան Մարմնի աշխատանքները, անպատասխան չմնացին անել կացութեան մատնուած լիբանանահայութեան օգնութեան կանչերը, այլ անգամ մը եւս գանատահայութիւնը փաստեց, որ միշտ կողքին է մեր ժողովուրդին, յատկապէս այն հատուածին, որուն կը սպառնայ գոյգն վտանգ մը իսկ:*

*Լիբանանահայութիւնը պիտի մնայ համայն հայութեան գուրգուրանքի առարկայ, բնաւ իր ճակատագրին պիտի չյանձնուի, առանձին պիտի չմնայ, այլ կրկի՛ն անգամ իր ներքին կենսունակութեամբ, ամրակուռ կամքով եւ իր իւրայատուկ տոկունութեամբ պիտի յաղթահարէ այս տագնապը եւս, դուրս պիտի գայ այս փապուղիէն առաւել եւս զօրացած ու առաւել եւս միասնակամ:*

*Սփիւռքի զարկերակը կազմող այս գաղութին դերն ու դրոշմը աշխարհասփիւռ հայկական գաղութներուն վրայ ծանօթ է բոլորիս, որուն անդրադարձաւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան ըսելով. «Համայն հայ ժողովուրդին ուշադրութեան եւ հոգածութեան առարկայ պէտք է դառնայ լիբանանահայութիւնը, որուն դերը չի սահմանափակուիր Լիբանանով ու Միջին Արեւելքով, այլ ունի համահայկական, համասփիւռքեան տարողութիւն»:*

*«Գանատահայութիւնը հաւատացողն է հայ ժողովուրդի ամբողջականութեան սկզբունքին եւ ունի այդ ամբողջականութիւնը ամուր եւ հզօր պահելու վճռակամութիւն». այս խօսքերով գանատահայութեան կեցուածքը գնահատած էր Լիբանանի «Վանայ ձայն»ի տնօրէն Վիգէն Աւագեան, որուն լիիրաւ հաւաստիքը տուաւ Գանատայի հայ համայնքը, երէկ, իր անսակարկ նուիրումով հայ ժողովուրդի այն հատուածին, որ ատենօք երբեք չէ զլացած նաեւ ի՛ր լուման բերելու աշխարհասփիւռ ու հայրենի մեր ժողովուրդին:*

*Նշենք, որ Լիբանանահայութեան ճգնաժամի կացութեան, առկայ մարտահրաւէրներուն եւ անոր ապագային սպառնացող վտանգին ի տես՝ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէն, Մայիս 20ին յառաջացուց Լիբանանահայութեան Օժանդակութեան Գանատայի Մարմինը:*

*Վարձքը կատար սոյն ծրագրին ձեռնարկողներուն, աշխատանքը ի կատար ածելու սիրոյն անխնայ ծառայողներուն եւ յատկապէս բոլոր նուիրատուներուն՝ ազգասիրական ու հայրենասիրական, նուիրական ու օրհնաբեր իրենց արարքին համար:*

*Դրամահաւաք-թելեթոնին գոյացաւ 206 հազար գանատական տոլար (152 հազար ԱՄՆ տոլար):*

Voyages HAIG Travel
Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676
ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱՒԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
PERMIS DE QUÉBEC
3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

# Դաշնակցութեան ուժին գաղտնիքը

Շատերու համար գաղտնիք մըն է դարձած Դաշնակցութեան ուժը։ Յաճախ այս ուղղութեամբ մեկուսի խոստովանութիւններու եւս ականջալուր եղած ենք։ Ի՞նչ է գաղտնիքը, որ, հակառակ անլուր հալածանքներու եւ անխոստովանելի միջոցներու, Դաշնակցութիւնը կէս դարէ աւելի ժամանակաշրջանի մը ընթացքին մնացած է ուժեղ եւ անսասան։

Նոյնիսկ յենարաններ ունեցող կուսակցութիւններ, որոնք ծնունդ էին առած Դաշնակցութեան հետ, եւ որոնց չէր պակսեր նիւթական ոչ մէկ միջոց, այսօր պատմութեան յանձնուած են՝ իրենց տեղը զիջելով նոր եւ այլազան կուսակցութիւններու։

Բազմաթիւ պատճառներ կան, անշուշտ, Դաշնակցութեան ուժի այս «հանելուկը» բացատրող։ Սովորական մահկանացու մը հարց պիտի տար, որ եթէ Ծրագիրն է հիմը այդ ուժին, միշտ ալ կարելի է իտէալ ծրագիրներ կազմել՝ անոնց մէջ տեղաւորելով ամէնէն յառաջդէմ գաղափարներն ու լաւագոյն խոստումները։ Եթէ կանոնագիրն է, որ անսասան կը պահէ այդ կուսակցութիւնը, նոյնպէս դժուար չէ կանոնագիր կազմել ու անոր մէջ խտացնել ամէնէն ազդու կանոնները։ Վերջին մէկ դարը հարուստ է եղած կուսակցութիւններու ծնունդով ու մահուամբ։ Կարելի է օգտուիլ տարիներու փորձերէն ու կազմել այնպիսի խիստ, արդիական ու գիտական հիմերով կանոնագիր մը, որ սքանչացում եւ պատկառանք ազդէ ընթերցողին վրայ։ Ու վերջապէս՝ անկարելի չէ նիւթական լայն միջոցներ ստեղծել, ակումբներ բանալ, ընդարձակ սրահներ վարձել, գործիչներ ունենալ, լծուիլ լայն փրոփականտի, թերթեր հրատարակել եւ ապահովել այն անհրաժեշտ միջոցները, որոնք կեղեւը կը կազմեն Դաշնակցութեան ուժին։

Սակայն միջո՞ւկը, կորի՞զը, հի՞մը, որուն վրայ կառուցուած է Դաշնակցութիւնը, կարելի՞ է ունենալ։ Այս է բուն խնդիրը, որ կը գրաւէ մեր հակառակորդներու, նոյնիսկ միջազգային դէմքերու եւ յաճախ օտար ոստիկանութիւններու ուշադրութիւնը։

Այս ուղղութեամբ բռնակալութիւններու արխիւները եւս իրենց փաստաթուղթերը ունին։ Ռուսական յեղափոխութենէն ետք՝ Կերենսքիի կառավարութեան օրով, ցարական ոստիկանութեան արխիւներուն մէջ գտնուեցաւ արձանագրութիւն մը, որ կը վկայէր, թէ գաղտնի ոստիկանութիւնը յաջողած է լայնածաւալ Ռուսաստանի բոլոր կուսակցութիւններէն ներս ունենալ իր գործակալները, յաճախ խաթարել անոնց դիմագիծը, ծառայեցնել զանոնք բռնակալութեան նպատակներուն։ Սակայն բոլոր այս կուսակցութիւններուն մէջ, ըստ փաստաթուղթերուն, միայն ՀՅ Դաշնակցութիւնը կազմած է բացառութիւն։ Դաշնակցութենէն ներս կարելի չէ եղած թափանցել, եւ կարելի չէ եղած գայն շեղել իր նպատակներէն։

Նոյնը վկայեցին նաեւ Օսմանեան սահմանադրութենէն ետք երեւան հանուած համիտեան շրջանի արխիւները։ Կարմիր սուլթանը ոչ միայն ահաւոր եւ արիւնոտ պայքար էր տարած Դաշնակցութեան դէմ, այլ նաեւ ամէն ճիգ սպառած էր Դաշնակցութիւնը ներսէն քայքայելու համար։ Նոյնիսկ պաշտօնական բանակցութիւններու փորձեր կատարուած էին, ու Տատեան Արթին փաշան քանիցս Պոլիսէն Ժընեւ երթեւեկած էր՝ զանազան խոստումներով բեռնաւոր։ Անոր գլխաւոր նպատակը կազմած էր առնուազն թիւրիմացութիւններու դուռ բանալ Դաշնակցութեան շուրջ։

Նոյն միջոցները գործածուեցան ու տակաւին կը շարունակուին պոլշեւիկներու կողմէ Առաջին ընդհանուր պատերազմէն ետք՝ մինչեւ այսօր։ Անգամ մեծածախս համագումարներ հրաւիրուեցան Հայաստանի մէջ՝ դաշնակցականներու ձեռքով կուսակցութիւնը «լիքուիտասիոն»ի ենթարկելու համար։ Արտասահմանի մէջ միլիոններ ծախսուեցան, կուսակցութիւններ ծախու առնուեցան, պնակալէզներու ամբողջ բանակ մը պահուեցաւ ու կը պահուի՝ միշտ նպատակ ունենալով կազմալուծել, քայքայել ու ոչնչացնել Դաշնակցութիւնը։

Եւ սակայն, ինչպէս անցեալին, ինչպէս միշտ, Դաշնակցութիւնը կը մնայ աւելի քան ուժեղ, կազմակերպուած ու անսասան։

Ա՛րդ, ի՞նչ է գաղտնիքը այս անընկճելի ուժին։

Առաջինը եւ հիմնականը Դաշնակցութեան հայեցիութիւնն է, շատ պարզ եւ սովորական բացատրութիւն մը՝ առաջին ակնարկով, եւ սակայն ամէնէն կարեւոր գաղտնիքը անոր ուժին։ Մարդիկ կարող են մտածել, թէ սովորական պայման մըն է այս ու դիւրին իրագործելի։ Ո՛չ, մեզի պէս փոքր եւ տկար ազգի մը կուսակցութեան համար չափազանց դժուար է առաջնորդուիլ զուտ հայկական շահերով։ Փաստը մեր շուրջն է եւ դիւրաւ ըմբռնելի։ Ներկայիս աշխարհը այնքան է ապականած, ժողովուրդներու շահերը՝ այնպիսի թնճուկի մը վերածուած, որ մեծ առաքինութեան ու մանաւանդ աւանդութիւններու կարիքը կայ՝ դուրս չգալու համար ազգային շահերու շրջանակէն։

Դաշնակցութիւնը հայ ժողովուրդի հարազատ ծնունդն է, ոսկորը ոսկորէն, արիւնը արիւնէն, ինչպէս պիտի ըսէր հին ընկեր մը։ Այս պարագան թոյլ չէ տուած ու չի տար մեր կուսակցութեան դաւաճանել հայ ժողովուրդի շահերուն։ Որեւէ օտար ուժ անկարելի գտած է մեզ իրեն ենթարկելու փորձը։ Այդ պատճառաւ Դաշնակցութիւնը պայքարի մէջ է եղած թէ՛ սուլթանին դէմ, թէ՛ ցարին։

Ահա թէ ինչու Դաշնակցութիւնը միշտ առանձին եղած է, ու այս առանձնութենէն բխող հայեցիութիւնը կազմած է անոր ուժին մեծագոյն գաղտնիքը։

Կարեւոր պարագայ մըն է նաեւ մեր կուսակցութեան բարոյականի հասկացողութիւնը։ Ամէն օր հնարաւոր է հիմնել նոր կուսակցութիւն մը՝ անոր տալով մեր այս յօդուածին սկիզբը յիշուած տուեալները՝ ծրագիր, կանոնագիր, նիւթական միջոցներ եւ այլն։ Սակայն դժուար է, եթէ ոչ անկարելի, տալ անոր բարոյական դիմագիծ, ինչ որ անհրաժեշտ է կուսակցութիւն մը ապրեցնելու համար ուժեղ ու մանաւանդ առողջ։

Այս կարեւոր առաքինութիւնը պէտք ունի աւանդութեան։ Իւրաքանչիւր դաշնակցական նախքան շարքերը մտնելը ու անկէ ետք ծրագրէն ու կանոնագրէն առաջ կ՚ուսումնասիրէ Դաշնակցութեան հիմնադիրներուն եւ հերոսներուն կեանքը։ Անոնց պատմութիւնը Դաշնակցական մարդուն կը սորվեցնէ նախ եւ առաջ ունենալ նկարագիրներու բարոյական հասկացողութիւն, որ պայման է ոչ միայն լաւ Դաշնակցական ըլլալու, այլ նաեւ մարդ։ Երբ այս հիմնական պայմանով օժտուած է Դաշնակցականը, միւս առաքինութիւնները արդէն իւրացուցած կ՚ըլլայ, որովհետեւ մեր հասկցած բարոյականութիւնը կը պարունակէ՛ ե՛ւ քաջութիւն, ե՛ւ անձնազոհութիւն, եւ՛ ընկերասիրութիւն ու վերջապէս՝ անխարդախ ու անշահախնդիր հայրենասիրութիւն։

Ահաւասիկ այն զոյգ «գաղտնիքները», որոնց շնորհիւ Դաշնակցութիւնը կը շարունակէ մնալ ուժեղ եւ երբեք չազդուիլ իր դէմ սարքուած արտաքին ու ներքին միացեալ դաւերէն։

Այս զոյգ արժանիքները նախ եւ առաջ կը պատկանին հայ ժողովուրդին։ Անիկա, իր պատմութեան անյիշատակ ժամանակներէն սկսեալ, եղած է հայրենասէր ու ապա օժտուած բարոյական խորունկ հասկացողութիւններով։ Հայ ժողովուրդի այս առաքինութիւնները դարերու բերած դժբախտութիւններու մէջէն կրցած են ազատել Հայկ Նահապետները՝ հասցնելով զանոնք մինչեւ Մամիկոնեանները, փոխանցելով զանոնք Սասունցի Դաւիթներուն ու վերջապէս իբրեւ աւանդ յանձնելով Դաշնակցութեան։

Դաշնակցութիւնը շարունակողն է միայն դարերու բերած ու դարերուն երթալիք մեծ գործին։

Այս ծանր ու սրբազան առաքելութիւնը իր ուսերուն վրայ կրող կուսակցութիւն մը երբեք չի յուսալքուիր ու անվարան կը շարունակէ իր ճամբան՝ վերջնական յաղթանակի խորունկ եւ անվերապահ գիտակցութեամբ։

Մուշեղ Իշխան

# ՀՅԴ-ի դէմ ժանգոտած սեպի ձախողած մարտավարութիւնը

1. Հեռաւոր անցեալի փաստը (Բոլշեւիզմի հակադաշնակցութիւնը)

Սովետամէտները ամբողջ եօթ տասնամեակ Դաշնակցութեանը «Հայ ժողովրդի թիւ 1 թշնամի» յորջորջեցին ու փորձեցին յատկապէս Սփիւռքում ազգը նացիոնալիստների ու սոցիալիստների (Բոլշեւիկեան տարբերակով անշուշտ) բաժանել…

Արդիւնքը, սակայն, պարզ է ու հաստատ եւ անհրաժեշտ էլ չէ փակագծերը լայնօրէն բացել

2. Ոչ-հեռաւոր անցեալի փաստը (յետխորհրդային Նէօ-լիբերալական հակադաշնակցութիւն)

1990-ականների սկզբում Հայաստանի Անկախութեան վերականգնման օրերին, իշխանութեան եկած ՀՀՇ-ամէտները՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորութեամբ, շղթայազերծեցին նոյնպէս հակադաշնակցութեան պայքար, ոչ միայն նորանկախ Հայաստանում, այլեւ ու մանաւանդ նոյն անկախութեամբ յուսադրուած սփիւռքեան գաղթօճախներում։ Բաժանարար գիծը, սակայն, այլ անուանումներով էր հրամցւում՝ «Նաբինջ ուտողներ», «հակահայաստանեաններ», ու մասնաւորապէս ՀՅԴ-ի շարքերում, որպէս թուացեալ պառակտման մարտավարութիւն՝ տարածում էին «բազէների եւ աղաւնիների», ընդհուպ մինչեւ՝ թմրանիւթերի բիզնեսով զբաղուելու խելակորոյս ամբաստանութիւններ՝ ընդդէմ ՀՅԴ կառոյց-կուսակցութեան, մասնաւորաբար թիրախաւորելով ղեկավար կադրերին։ Սրա արդիւնքն էլ է յայտնի հայ ժողովրդի համար, եւ որ ինչ վախճան ունեցաւ ԼՏՊ-ական հակադաշնակցականութիւնը։

3.- Ներկայիս՝ «Թաւշեայ յեղափոխութեան» երկամեայ ժամանակաշրջան (Հակադաշնակցութիւն՝ պոպուլիզմով)

Տուեալ ժամանակաշրջանում ՀՅԴ-ն յայտնուեց պոպուլիզմի (ամբոխավարութիւն) ըստ էութեան ազգային պառակտմանը միտող՝ «հակայեղափոխականների», «սեւերի», «մերժուած նախկինների» ու դեռ… «այլեւս քաղաքական գերօ ազդեցութիւն ունեցողի» ցանկում։ Յատկանշելին, սակայն, եւ որ կարմիր թելի պէս ակներեւ է, հեռաւոր անցեալից մինչ այժմ ՀՅԴ-ին ամէն կերպ կոտորակելու-պառակտելու նոյնատիպ գործելաոճն է, որին էլ կառչելով փորձել են տարատեսակ քարոզչամիջոցներով հասարակական թիւր կարծիք ստեղծել, շրջանառութեան մէջ դնելով ամբոխահաճ յայտարարութիւններ.

Եւ այսպէս.-

– «Հայաստանեան վատ դաշնակցականներ, Սփիւռքեան լաւ դաշնակցականներ,

– «Առողջ ու կառուցողական դաշնակցականներ, ծայրայեղական, հակապետական ու հակահայաստան դաշնակցկններ»,

– «Բիւրոամէտ դաշնակցականներ ու հակաբիւրո դաշնակցականներ..», եւ այդպէս շարունակ՝ եզրագիծը հատում են «ՀՅԴ-ի թաղման կարգով» ու նրան «պատմութեան աղբանոցը նետելով»։

Դեռ լաւ է, որ այս ամէնը ընդդէմ այն կուսակցութեան է ասւում ու արւում, որն ըստ անուանարկողների՝ «քաղաքական գերօ ազդեցութիւն» ունի. հապա՝ թէ զերոյից առաւել լինէր, ինչեր, որ չէին յօրինի մերօրեայ ամբոխավարները։ Այսպէս, ահա, պոպուլիստներն են ասպարէզում գերիշխում ու իրենց մէկ ու միակ զէնքն է՝ մեղմ ասած՝ ամբոխահաճոյ խոստումներն ու յայտարարութիւնները, որոնք երկու տարի շարունակ չեփորւում են ոչ թէ յօգուտ ժողովրդի կենսագործելու, այլ ինքնանպատակ՝ իրենք իրենց գովազդելու ու դրանով ազգի եւ պետականութեան անվտանգութիւնը խաթարելու գնով։

Պատմա-հասարակական բազմաթիւ փաստեր կան ապացուցելու, որ ժողովուրդները, ընտրութիւնների մասնակցող ու նոյնինքն քուէարկող հասարակայնութիւնը ամենաշատը իրենց խաբուած են զգացել նոյն այս ամբոխավարներից։ Այսօր առաւելեւս այդպէս է, քանզի պոպուլիզմին լաւապէս ծառայեցւում են համացանցային աշխարհահատարած հնարաւորութիւնները, միջազգային այսպէս ասած սորոսական նիւթա-տեխնիկական դաւադիր միջոցներով։

Ահաւասիկ, ՀՅԴ-ի դէմ շղթայազերծուած մերօրեայ պայքարը թէ՛ ՀՀ-ից ներս, եւ թէ՛ Սփիւռքեան համայնքներում (յար եւ նման սովետների ու ՀՀՇ-ականների, բայց աւելի արդիականացուած) իր անճարակ ընթացքն է որդեգրել, որտեղ յերիւրանքների առիւծի բաժինը յատկացւում է ՀՅԴ-ի կառոյցների ինչպէս եւ՝ շարքերի միջեւ բաժանարար սեպ խրելու անյոյս ու անհեռանկար ջանքերին։ Անհեռանկար՝ քանզի իրենց կնքահայրերից ժառանգած ու այլեւս ժանգոտած սեպի մարտավարութիւնը ըստ ամենայնի ձախողուելու է։

Ցաւօք՝ նրանք կրկին ու կրկին չեն գիտակցում, որ ՀՅԴ 130- ամեայ գաղափարական արժեհամակարգը առաւել եւս պոպուլիստ բախտախնդիրների ու սրանց տեղական թէ՛ արտերկրային խամաճիկների ստապատիր եւ պառակտողական քարոզչութիւնների ընդմիջից վեր է յառնելու աւելի կազմակերպ, աւելի կոփուած ու առաւել ամուր կամքով ու հաւատքով՝ ի խնդիր հայոց պետական ու համազգային գերնպատակների կենսագործման։

ԴԵՐԵՆԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ

horiZon
ARMENIAN WEEKLY
VOL. 26 No. 8-9 (1289-1290) JULY 20-27, 2020

# Armenia's armed forces repel Azerbaijani attempts to breach border

YEREVAN—The situation on the Armenia-Azerbaijan border remains tense after a day of fighting that was sparked on July 12 by Azerbaijani forces attempting to infiltrate and capture a military border post in Armenia. According to Armenia's Defence Ministry, the Armenian Armed Forces repelled the incursion efforts, but shelling of Armenian civilian targets continued throughout July 12 and 13.

At around 12:30 p.m. on the first day, Azerbaijani troops began shelling a military outpost in the Tavush Province of Armenia with Azerbaijani soldiers driving a military combat vehicle toward the border. According to the Defence Ministry, Armenian soldiers issued warnings, after which the Azerbaijani soldiers abandoned the vehicle and retreated. Shortly after, the Azerbaijani troops launched an attack and attempted to capture the Armenian military position by using artillery fire. Azerbaijani troops suffered losses and were repelled. The same Armenian position once again came under artillery and tank fire from Azerbaijani hours later.

Armenia's Defence Ministry spokesperson Shushan Stepanyan said there were no fatalities on the Armenian side. Azerbaijan's defence ministry reported that four of its soldiers died during the failed operation.

On the morrow, the Azerbaijani military fired mortar rockets on the Armenian village of Chinari in the Tavush Province hitting a residence. No casualties were reported.

Armenian Armed Forces shot down several Azerbaijani drones that were deployed as fighting escalated on the border in Tavush Province.

Images of one of the downed drones show the remnants of what appears to be either a Thunder-B recon drone, or a Skystriker combat drone—both manufactured in Israel.

Azerbaijan had deployed the Thunder-B drones during the April 2016 War. The Skystriker drones are relatively new, and were unveiled by Azerbaijan during a military parade in January 2019.

During an emergency cabinet meeting on Monday, Prime Minister Nikol Pashinyan warned Azerbaijan that its military-political leadership will bear the entire responsibility for the consequences of efforts to destabilize the region.

"Yesterday, on July 12, the armed forces of Azerbaijan launched provocative actions on the Armenian-Azerbaijani border, attacking our border posts located in the direction of Movses village of Tavush province. The provocative operations of the Azerbaijani armed forces are strongly condemnable. This morning these operations have resumed. With their resumption the Azerbaijani military-political leadership will bear the entire responsibility of the unpredictable consequences of destabilizing the region," Pashinyan said.

Last week, in an interview broadcast by local television outlets, President Ilham Aliyev of Azerbaijan challenged the principle of resolving the Karabagh conflict through peaceful means and asserted that his country had a right to defend itself, calling the effort of international mediators who expressly said that there would be no military solution to the conflict, "meaningless." Less than a week after Aliyev's statements, Azerbaijan forces launched the attack on Armenia's borders.

"This military incident did not occur in a vacuum," said Pashinyan. "For a long time now, Azerbaijan's leadership has been playing the anti-Armenian card for their well-known motives. It is possible that we are dealing with an action of the Azerbaijani military-political leadership to push its domestic problems to the back burner by escalating tensions on the border."

Pashinyan accused official Baku of having no regard for human life, including those of Azerbaijani soldiers. He cited Azerbaijan's refusal to join the United Nations Secretary General's call for a global ceasefire during the COVID-19 pandemic.

"It turns out that the more the pandemic spreads in Azerbaijan, the more the socio-economic situation worsens, the more the anti-Armenian and military rhetoric of the Azerbaijani leadership intensifies. Instead of urging its own people to follow the health safety guidelines, the Azerbaijani leadership is making military threats and calling for war. It seems that "anti-Armenianism" is the best way to fight the coronavirus," added Pashinyan.

The prime minister also took aim at Turkey, whose foreign ministry issued a statement decrying what it called"yet another manifestation of Armenia's aggressive nationalism."

"Turkey will continue, with all its capacity, to stand by Azerbaijan in its struggle to protect its territorial integrity," said the Turkish foreign ministry statement.

"Turkey's actions on provoking regional instability is also concerning," said Pashinyan. "It is best reflected in the official statement of the Turkish foreign ministry where the latter is expressing unconditional support to Azerbaijan's actions with an obvious and already traditional anti-Armenian logic."

Armenia's Foreign Ministry said that Turkey was trying to "instigate instability in our region."

"This provocative attitude by Turkey and its groundless accusations against Armenia attest to the fact that this country has been acting not as a member of the OSCE Minsk Group but as a party involved in the Nagorno-Karabagh conflict," read a ministry statement. "This fact makes it even more impossible for Turkey to play any role in issues related to the Nagorno-Karabagh conflict within international and particularly the OSCE framework."

"Azerbaijan's attack-and-blame game is only possible because Aliyev's been allowed to block the investigative mechanisms – gunfire locators and observers — that would hold it accountable for its cross-border aggression," said Armenian National Committee of America Executive Director Aram Hamparian. "If Baku wants the world to believe its anti-Armenian finger-pointing, it should be championing — not obstructing — the Royce-Engel peace proposal."

# $206,000 raised for Lebanon relief

MONTREAL—The Armenian community of Canada has always conveyed its wholehearted and generous support to wherever the call for help has originated, from Armenia to any corner of the Armenian diaspora.

The Armenian community in Lebanon is facing a major crisis due to the general financial distress of the country and the Coronavirus pandemic.

Two months ago, The A.R.F. Central Committee of Canada launched a special appeal to the community and declared about the creation of the Canadian Committee for the Relief of Armenians in Lebanon.

On May 28, the newly formed committee launched a fundraising drive for the relief of the Armenians in Lebanon, through which the Armenian community in Canada once more expressed its willingness to extend a helping hand to wherever the call for help originates.

On July 9, Canadian Committee for the relief of Armenians in Lebanon initiated the Aid4Lebanon online Telethon. Diaspora and homeland artists participated in Aid4Lebanon telethon-fundraiser.

$206,000 was raised in Aid4Lebanon telethon.

The fundraiser continues. Please donate!

Visit https://camam.akaraisin.com/Aid4Lebanon

# ARF Supreme Council of Armenia announcement concerning Azerbaijan's latest aggression

Once again Azerbaijan is resorting to aggression. In order to divert attention from its own domestic problems, this time it has targeted the north-eastern border of the Republic of Armenia, during which peaceful civilian homes were shelled. Azerbaijan's military efforts on the sovereignty and territory of the republics of Armenia and Artsakh, just as before and now, are doomed to fail due to the professional and dedicated defence by the valiant Armenian Armed Forces.

The Republic of Turkey blatantly is expressing its support for Azerbaijan's invasion attempts, once again proving its government's ingrained racism and hatred. Through its sacred resolve for the homeland, the Armenian people will thwart Turkey's blind hatred toward Armenians and Armenia. History has shown time and again that the Armenian people are united in the defence of the homeland.

As always, the Armenian Revolutionary Federation, with its global structure, steadfastly stands with the victorious Armenian Armed Forces and its soldiers who are on the frontlines of the homeland's defence.

At the same time we insist that the international community and the civilized world not remain indifferent toward the warmongering by the Turkey-Azerbaijan alliance, which can be catastrophic not only for the fragile ceasefire but for the entire region.

Thus, in appealing to the international community, we call on them to not simply issue their usual restrained overtures to the sides, but clearly understand the Turkey-Azerbaijan aggression and come up with necessary measure to avoid a calamity.

ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION
SUPREME COUNCIL OF ARMENIA

# ANCC launches first ever community-wide strategic survey

OTTAWA — On July 10, the Armenian National Committee of Canada (ANCC) launched its first ever community-wide strategic survey, asking Armenian-Canadians to share their opinions and feedback on ANCC's wide-ranging policy priorities and upcoming initiatives.

"This is as a unique and important opportunity where we are inviting our grassroots activists to directly contribute to the formulation of our policy agenda and share their valuable feedback on what we should focus on moving forward" said Hrag Darakdjian and Shahen Mirakian, Co-Presidents of the ANCC.

The 10 question survey is designed to give participants an opportunity to share their opinion and comments on issues such as strengthening the independence of the Republic of Artsakh, promoting stronger Canada-Armenia relations, Genocide recognition, remembrance and prevention, combatting online hate and protecting the rights of Armenian minorities around the world.

"We urge each and every community member to take a few minutes and complete the survey, which will give us better insight and suggestions on how to better represent the interest of our strong and dynamic community" concluded Darakdjian and Mirakian.

# ANCC strongly condemns ongoing Azerbaijani violence in Armenia

OTTAWA—The Armenian National Committee of Canada (ANCC) strongly condemns the ongoing attempts by the Azerbaijani Armed Forces to infiltrate and provoke military aggression in the North-Eastern Tavush region of Armenia.

Despite a global pandemic and international calls for ceasefire by the United Nations, Azerbaijani authorities are continuing their military aggression, constantly threatening resumption of war and violating the very norms of international law. Such attempts are largely being carried out by Azerbaijani authorities to divert their citizens' attention from their domestic failures resulted from the COVID-19 pandemic.

Following large-scale military exercises and numerous ceasefire violations in May, Azerbaijan is now endangering the sovereignty of the Republic of Armenia.

Any attempt that intends to violate the territorial integrity of the Republic of Armenia is unacceptable and must be categorically condemned by Canada and the international community. Additionally, the statement made by the Turkish Foreign Ministry — unconditionally supporting the Azerbaijani army — is deplorable and must be addressed accordingly.

The ANCC is closely monitoring the situation and is in direct contact with officials from Global Affairs Canada (GAC), providing updates and urging the government to remain vigilant and condemn all sorts of Azerbaijani aggression.

# The role and responsibility of ARF youth

## AN INTERVIEW WITH ARF BUREAU CHAIRPERSON HAGOP DER KHATCHADOURIAN

MONTREAL—Below is a comprehensive and extensive interview in which ARF Bureau chairperson Hagop Der Khatchadourian highlights the role, responsibility and working methodology of the ARF Youth worldwide through its numerous branches and regional organizations. The interview is conducted by Vahakn Karakachian editor-in-chief of the Horizon weekly in Canada.

**Vahakn Karakachian:** *The backbone of the ARF is its youth. The ARF youth has always been on the front line- from the Lebanese civil war to the latest war in Syria and the four-day war in Artsakh. In Armenia, during the COVID-19 pandemic, the youth visited different regions of the country and distributed relief packages to those in need, particularly in remote and border village areas. Recently, the ARF Bureau reorganized its Youth Council and central organizational structure. Can you clarify and comment on this reorganization?*

**Hagop Der Khatchadourian:** First of all, I would like to confirm that you are right when you emphasize that the ARF youth has always been and still is on front line: in terms of the security of our community in Lebanon, with the effort to protect the homeland and help those in need both in Armenia and Artsakh, by supplying the essential medical care, food and daily needs of our people in the midst of this epidemic period, in the homeland and in various parts of the Diaspora. The examples of this work that you have listed are exemplary.

Let us not forget that in many cases, our volunteers consciously endanger their health and safety while performing their duties. This is the manifestation of the principles of complete devotion and awareness of duty. In this sense, we can only be proud that our youth are aware of their mission and have a strong spirit to serve the nation.

As for the ARF Youth Council, I would like to mention that the Bureau has reformulated the central youth structure, which now consists of two main departments: the Council and the Office.

The Council is represented by 6 committees with more than 50 AYF members worldwide. The committees are headed by ARF members with the expertise in youth related issues. The head office is located in Yerevan, which administers the daily tasks of the council and the committees. The Youth Office has 2 staff members, one from Armenia and other from Diaspora.

In the process of the reformation of the Youth Office, committee members are doing a profound work. As an example, I would like to emphasize the activities of the Education Committee, that prepares material on a monthly basis — to deliver national, ideological and universal values to the youth, with which they can be educated and informed with current issues in the homeland and in general. I am really glad that the Council, with its Education committee, stays commitment and prepares important initiatives such as a monthly educational newsletter, an education program for the AYF, creating an education platform and organizing youth leadership training seminars.

The above-mentioned examples are only a few of the results from the restructuring and creation of the ARF Youth Office and Council, respectively. It is commendable that under the leadership of the Council, the committees are working with a special drive and dedication for the betterment of our organization. The Council has already prepared a special protocol for ARF Youth on all levels of the organization, which is now a guideline in the development of programs and projects.

Our youth is committed worldwide with activities and projects. For example, the AYF of Armenia's "Help Your Compatriot" program, the on-line campaigns for Armenian Genocide on April 24, the Pan-Armenian camps, the junior organizations counselor training programs, the youth federation's regional and Pan-Armenian conferences (to be held in Artsakh, Armenia, Europe, and various Diaspora communities), but, unfortunately, due to the COVID-19 pandemic, all initiatives have been postponed, but the programs are ready and will be implemented at first possible opportunity.

The important fact is, that there is a new spirit invested into these fundamental projects. The youth is actively developing programs on national, ideological, organizational, educational, socio-economic and environmental perspectives, while including the Armenian cause, the preservation of the Armenian identity and PR with modern methods and methodologies.

Our youth are trained with national, ideological principles to become role models to their peers and exemplary citizens with strong principles for human rights and social justice.



*ARF Bureau chairperson Hagop Der Khatchadourian*

The facts are eloquent — they participate in the initiatives of various international youth organizations, where they represent and defend our tasks of the Armenian Cause and present our views and understandings on universal themes. A vivid example is the ARF youth organization, which is a member of the International Union of the Socialist Youth IUSY and its members have held top positions such as Vice President. This important platform often serves for fulfilling and pursuing our tasks in terms of the Armenian Cause.

**VK:** *This year marks the 100th anniversary of the Treaty of Sevres and the W. Wilson's Arbitral Award. So what do you want to add about the Armenian youth and especially ARF youth?*

**H.D.K.:** Treaty of Sevres has a vital importance to our Armenian Cause. The Treaty of Sevres and the W. Wilson's Arbitral Award are the documents of the world's debt to Armenians. This document is the base of our entire demand for Armenia. Although it has not been ratified, however it enshrines the impenetrability of our rights and has become the duty of the international community to the Armenian people. Certainly, there is an opinion that the fact that the Treaty of Sevres has not been ratified somehow diminishes its value, but we believe in the inviolability of this document and the fact that the international community accepts its responsibility to give the homeland of Armenian people back to them. This is an undeniable reality and we must always emphasize it, in the whole world.

Like the ARF big family, our youth are also focusing on the most important event of this year which is celebrating the 100th anniversary of the Treaty of Sevres and emphasize its value. I know that the Youth Council has prepared a call (with 5 languages), a global PR campaign, and an explanatory booklet for the youth about our moral requirements, proposals for resolutions with foreign youth committees, demonstrations and so on.

The ARF Bureau also has a political initiative in the coming autumn in the suburbs of Sevres, Paris, of course, if the epidemic conditions allow its implementation. We are also going to celebrate the 100th anniversary of W. Wilson's Arbitral Award in November in Washington.

**VK:** *If you sum up with three sentences, what would you say to the ARF youth and the Armenian youth in general?*

**H.D.K.:** a) Our youth is not only our future, but also our present.

In this regard, we should involve our youth in our current works as main participants- planners, implementers, and leaders. And this is already in process we just need to put it in motion. Our youth are involved in all our spheres, as well as in the governing bodies, especially in the main activities of the Armenian Cause.

b) Youth should be prepared, insistent and dedicated.

Youth who stand in the front line should be fully prepared and confident, as a torchbearer of national and ideological values and as a main defender of leading socio-economic approaches, especially for human rights and social justice. In short, a prepared individual who is dedicated and committed.

c) ARF youth should be affect the Armenian youth with his/her words, thoughts and deeds.

The ARF youth should be the paragon of Armenian Cause, social justice, national upbringing, and commitment in order to inspire the Armenian youth in general. I am convinced that our youth can confront all the challenges facing our people and be the force that leads us today and tomorrow. Finally, our youth should be the torchbearer of our demands, with their national formation, critical thinking, knowledge and awareness of modern methods. They should have a dominant presence and sometimes even being direct to take their right places on the platforms of the homeland and the Diaspora equally.

**V.K.:** What are the ARF's priorities for the next two years?

**H.D.K.:** First of all, Armenia is the main point. ARF is a unique phenomenon in Armenian reality, which has pan-Armenian political, organizational and national liberation struggle and unique structure. It is not only wherever Armenians are, but also at the same time it conducts political activities in the homeland. Today it has a participation in political life in Armenia, acting as an extra-parliamentary opposition. In this sense, we have decided to emphasize the positive sides of the People's Movement in 2018, but to criticize the negative manifestations, to struggle against them and, in many cases, to offer alternatives.

Unfortunately, in the last two years, a toxic environment has prevailed in Armenia and it is gradually intensifying: by the government, which presents itself in the name of "tolerance", the discriminatory, dividing lines, and the approach of black and white provoked dominates the atmosphere of revenge and malice. All of these are compounded by the government's failed policy of cadre, which unfortunately did not inspire any hope for the future. Despite these facts, the ARF remains attached to its mission, especially out of the country, where it is necessary to combine work with the government within Hay Dat and for the sake of maintaining Armenia's reputation.

The second, of course, is Artsakh, we should get diplomatic consolidation for the victory of its military front. Presidential and parliamentary elections have already taken place in Artsakh and a new government has been formed. Dashnaktsutyun is a part of the new parliament, although in smaller numbers than the previous one. We do not only provide our parliamentary presence. We will continue our active participation in the internal and external life of Artsakh. The priority is that the independence and liberation of Artsakh will not be discussed only on diplomatic tables. International pressure has increased in this regard. The latest example is Lavrov's statement, which brings serious concerns. It is our duty, as a pan-Armenian structure, to work everywhere so that the negotiations work in favor of Armenians and at the same time contributes improvement of Artsakh's internal life and economic development.

